


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ Համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի ճաքար օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Եկու թիւ ա-
ռաջ հրահարակուած քերթը 40 Սանդիմ:
Զհրահարակուած գրութիւնը եւ յսրուիր:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԽԱՉԻ ՏՕՆԸ ԱՐՄԱՇԻ ՄԷՋ

(Թղթակցութիւններ մը փախուած)

“Արմաշու ուխտաւորութեան հանգէս-
ները այս տարի շատ շքեղ կերպով կատար-
ուեցան: Զորս հաղարէ աւելի ուխտաւորնե-
րու բազմութիւն մը կար, գլխաւորաբար
Պոլսէն, Ատարաղարէն, Կուտինայէն, Աֆիօն
Գարահիսարէն, Պիլէճիկէն, Սիփրիհիսարէն,
Իսկիշէհիւրէն եւ այլ տեղերէ եկած, որոնք
Վանքին սնտուկին մօտաւորապէս 6 — 700
ոսկի ձգեցին: Հաւատացողներու այս ստուար
բազմութիւնը շաբաթէ մը ՚ի վեր կը դիմէր
իրենց աղերսը գնելու բարեպաշտներու սըր-
տին այնքան մօտիկ եղող Զարիստիան Սուրբ
Աստուածածնի առջև:

Հացով է որ տաճարէն ներս կը մտնէ
ջերմեռանդ ուխտաւորը, անխառն զօրաւոր
հաւատք մը զինքը գետին կը դգետնէ հաւ-
բուրելու հրաշագործ Տիրամօր ոտքը. արուես-
տական ամեն ձեւերէ հեռու բարեպաշտը
հոն կը պարզէ իր սրտին աղօթքը, նիւթա-
կան հաշիւներէ զերծ, անխարդախ զգա-

ցումներով շարժուած ան կը մօտենայ ահա-
ւոր պատկերին ու բժշկութիւն կը խնդրէ:

Պահաց երեքշաբթիէն իվեր առտունները
Պատարագ եւ իրիկունները “ Եկեցէ դի ա-
ղօթքները կը մատուցուին: Գրեկանքի ա-
շակերտներ իրենց մեզմ’ ձայնը միացուցած
վարդապետներու զօրեղ ձայնին, տեսակ մը
հոգիացումով կերպին “ Եւ արգոյր. Նարե-
կացին իբրեւ կատարեալ միսթիք գիտցած է
տալ ներսի զգացումներուն անբացատրելի
շեշտ մը, հոգիացած բառեր կը պոսթկան
գուրս երկնային կրակով հրդեհուած կուրծ-
քէն, գիտախուլ մարգարէն անապատին հո-
րիզոնէն կը տեսնէր կոյս մը՝ որ կոշուած էր
մեծ դերի մը, սակայն բնաւ չէր կրցած այն-
քան մաքուր փողփողումով ներկայել. Հայ
հանճարին վիճակուած էր այդ շքեղ ծաղի-
կը գունազեղել պէտք եղածին պէս:

“Եւ արգոյր ժողովրդեան անմոռնջ
յոյգերը կարծարծէ, խուլ զգացումները կը
խանդավառէ եւ հաւատքը կը սաստկացնէ:
Ամենէն աւելի այս աղօթքին տառն է որ հի-
ւանդները յափշտակուած վայրկեան մը կը
մոռնան զիրենք, հրաշքը կը խանդավառէ
ամենքը: Ահաւասիկ համր մը՝ որ բարբառի
կարօտէն այրած սրտով կաղօթէ լուռ ու
յուսարեկ, Աստուածածնին կը նայի ողբագին

խօսիլ կը խնդրէ, նշանացի շարժումներէն ա՛լ ձանձրացած է, կուզէ խօսիլ իր լեզուն. և ո՛հ, ի՛նչ մեծ ուրախութիւն, երբ իր խընդիրը լսելի եղած է: Հոս ալ կոյր մը կայ կանգուն, լոյսի բարիքներէն զրկուած, նաև խոկուն ու տխրաբէմ, լոյսի բարիքներէն զրկուած մը՝ որ մանուկ գիտութեան ամեն ճարտարութիւններէն ալ յոյսը կտրած, կը դիմէ երկնային ճարտարութեան, գիտութեան ստեղծչին, անոր գթութեան ճաճանչներէն կանկնալէ նա իր բուժումը: Տեսէք սա յիմարը որ հիանալի երկիւղածութեամբ մը մեղայ կը հառաչէ, խորհրդածութիւն, հոգեխօսութիւն չունի այն, իր մեղայն ագոթքն է, աղերսն է, հաւատքն է:

Ուխտաւորութեան հանդէսներուն ամենէն զմայլելի և յափշտակիչ մասը կը կազմեն Ատաբաղարի կիներուն գիշերուան երգեցողութիւնները, ներգաշնակ «Տէր ողորմեաքները, միանուաք շարականներ, անուշ մեղեդիներ գիշերն ի բուն կը շարժեն բարեպաշտ հաւատացեալներու ամենէն փափուկ զգացումները, որք հոն կը ժողվըուին, ձանձրացած դուրսի խժըրտութեն և զուռնայի կոշտ բոմբիւնէն: Արմաշ ալ իր բանային ունի, ուր Բաբոսի ինկարկունքի բիշ թիւ չեն կազմեր. ի՛նչ զարմանալի հակապատկեր, — մինչդեռ եկեղեցիի մէջ Ատաբաղարի Հայուհիներ Աստուածածնայ տաճարը կը փառաւորեն՝ դուրսը իրենց եղբայրներ սեղաններու շուրջ խմբուած կը պարպեն օղիի գաւաթներ՝ տանջելով իրենց մարմինը այնքան չարաչար, որքան պէտք էին հաւատաւորներու համար նուիրական եղող այս օրերու մէջ, իրենց միութարութիւնը գտնել աղօթներու շուրջ և կամ իրենց բոյրերու բաղցրիկ երգեցողութեան մէջ: Ապրին Ատաբաղարի կիներն՝ որոնք եթէ իրենց զարգացմամբ այնքան չեն պարծենար, իրաւունք ունին սակայն յոխորտալու իբր կրօնասէր, բարեպաշտ և քաջ երգող: Անոնք աղը կը կազմէին Արմաշու հանդէսներուն, փայլը Աստուծոյ տաճարին:

Այս տարի եւս կարգ մը տառապեալ հիւանդներ բժշկուած կը դառնան իրենց տեղերն, ինչպէս մէկ երկու համբեր լեզու ելած, բանի մը անգամալոյծներ քալելու վիճակի մէջ:

Ամերիկայէն կը գրեն թէ, Մաշտոց վարդապետ՝ Ուստորի եկեղեցիէն ձեռքի գալիք անօթները ու սպասները վասն ի վերուստ ընելով, գեռաւորի Ամերիկուհիի մը հետ առեր քալեր է:

Հակառակ եկեղեցական օրինաց, Մաշտոցին պէս աշխարհային կեանքի անփորձ երիտասարդները վարդապետ ձեռնադրելով՝ աղգին արատ ու փորձանք բերել տուողին երեսը ճերմակ չի մնայ:

Կ. Պոլսոյ ոստիկանութեան պաշտօնատունէն տրուած հրամանի մը համեմատ, ասկէ ետքը գաւառներէն Պոլիս երթալ ուղող ազգայնոց մասին երկար բարակ ձևակերպութիւններ չպիտի ըլլան, այլ՝ ասկէ առաջ եղածին պէս, ազատ պիտի ըլլան ուղած տեղերնին երթալու:

Սեպ. 10 ուրբաթ օրը առաւօտեան ժամը 4ին (ը. թ.) Նիկոմիդիոյ Պուլտայ Մէյտանը կոչուած շուկան ածուխի մը մթերանոցէն հրդեհ պատահելով, երկու հարիւր խանութ, տուն մը և մզկիթ մը հրոյ ճարակ եղած են 7 ժամուան մէջ: Այս հրդեհէն փրասուած են մեծաւ մասամբ հայերը և Պ. Բաթրիգոս անուն յոյն մը, որուն ալիւրի գործարանին հետ ցորենի մթերանոցներն ալ մոխիր դարձած են:

Մարգո անուն 22 տարեկան յոյն մը, որ առկէ առաջ ձիպալի յունաց Այ Նիգօլա եկեղեցիին մէջ ժամկոչութիւն ըրած է եղեր, անցեալ ուրբաթ առաւօտ յաջողեր է Հռովմէական աղ-գայնոց Բերայի Ս. Յովհանն Ոսկեբերան եկեղեցւոյն ամպիոնին մէջ մտնել պահ-ուրաիլ, և իրիկունը ուշ ատեն ժողով-առքի ելած, Ս. Փրկչի և ուրիշ պատ-կերներու վրայէն ոսկիէ ու արծաթէ զարդերը գողնալու միջոցին օձիքը ձեռք տուեր է:

ԶԵԿՈՅՑ

Առ Պ. Հի, Հի, — Ընտանեկան բա-րոյականի մասին նախանձախնդիր ու պաշտպան եղող ժողովուրդին պարտա-ւանքէն եւ «Հայերի» ի սարազանէն ա-զատելու համար պարտաւոր էք ձեր անպարկեշտ ընթացքէն հրաժարիլ ու-րիշ ճար չի կայ օձիքնիդ ազատելու: Ձեր պաշտպան բարեկամներն իսկ կը վկայեն թէ աղքատ՝ բայց պարկեշտ մարդ ու մը պատուոյն հետ խաղալու վը-րայ էք, որ պարտաւորի և անարգարա-նալի արարք մըն է:

Զիպօզօր

ՏԵՐՎԻԾԸ

Մի օր, յԱրեւելս, — կարծեմ ի Պաշտաւս — Պաստիւստը գերեմէն զտնաւոր մի պարկ Ընկուցի յորս կողմն առած, անընդհատ, Խոտը մը մանուկներ անառակ եւ բարի Բաժնէրու հաւաք աւարտ իրենց մէջ Յարմարած էին մեծ պայքար ու պէս: Եւ — քանի որ որ զոտնոյ աւարտ Զորստուն առնու միշտ բաժին ըստար — Հաւաճայնութիւն յունեցոյ տեղի, Խնկոյն ըսկրար մի կոխ կասաղի: Փոխառեցաւ իւրաքանչիւր մի կոյս խիս, իստ-նակ, Որ ճաւքուն մէջտեղ շարժեւ շարմակ. Պատերազմ իրօք տեսնեցաւ բաւ էր. Իրարու անցած ոտներ ու ձեռներ, Սեւոյիկ աչեր բորբոսած ի հոտ,

Աղաղակներ, խոշ ճայներ, ճիշեր սուր, Փոքրիկ, ածիշուած, գրոյիներ ըսկիսակ, Որք կը շողային սաք ստեղծակ սակ: Եւ ունեց փաթեցն ու աչոց գոտին Որք կը սողային, զերդ օձ, ի գիտին... Այսպէս սասկոյութեամբ, կրօնք անհրաւար Տեսեւ պատերազմն ու յէր պերջանար. Երբ տեղիչ մանցաւ ապիսակաւորոյ, Գիտարաց մի մորք կը ծածկէր զիւր ու, Բակեղար մ'ունէր աղփասաց նրան. Մէջքէն կախած էր մի փայտեայ առան. Եւ կորստակ ու ցուպ ի ձեռին. Վառ աչօք կարծես կը տեսնէր հեռին. Տեսնեցոյ կրօն, եկաւ մանկանց քոյ, Կշատեց զանոնք մեկ երկու խօսքոյ, Բաժնէր իրարմէ, եւ հարցոյ կրօնոյն Պատճառն երբ ըսին՝ ժայտեցաւ խնկոյն: — «Իմ մանուկ եք դեռ, իսկ ես՝ ծերունի. Հաւատացե՛ք ինձ. սիրիք ինձ» Թող խաղաղութիւն ձեզ առեն առեն, Ինչպէս Սուրբ Գիտ ալ պատմիւնն արդէն: Արդ կ'ուզե՛ք որ ես, ձեր խնկոյնն հաւաք Լիւնիս դասաւոր եւ իրաւարար, Բաժնէր ընկոյցներն ա՛յնպէս՝ ինչպէս որ Տեսն Սաստած բարի, արդար եւ հրգօր, Երբ հոս ըրար, պիտ' անշուշտ բաժնէր. — «Կ'ուզե՛մ» գոյեցին բազմաթիւ ճայներ. — «Լաւ, ասկայն յուսաւ քե, դիմօք զըսարք Անճայն, անգանգաւ պիտ' ընդունիք արդ Վրճիւն աչն զոր ես, զերդ փոխանորդմարդ Պիտի գործարեւ աչմ Սաստածօրէն» — «Պիտի ընդունի՛մ» գոյեցին նորէն: Յայնժամ միւն մանկունք պատէին զիւր շարջ

Տեղիչն աշտոյ, մտաւոր եւ շարջ, Բացաւ ընկուցի տարակն ու՝ կաւաւ՝ Ունեց շատ տար եւ աչոց՝ բնաւ... Ապա իւր աչերն ուղղեցոյ՝ յերկին Սրբաճաշ իւր ցուպն ձեռք առաւ կրկին Եւ՝ առանց ճայնի կաւ հառաչանաց՝ Հանդարտ, յաղթաբաշխանցաւ ու գրեաց:

Ա. Փ.

ԲՈԺ. — Մէկուն կուտայ, կշտացունէ, միւսը ծարաւ կը մեռցունէ:

ՀԻՒՐԱՄԵԾԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Աշխարհահոյակ քաղաքագէտն թա-
լէրան, ձեռակերպութեանց մեծ կարեւորու-
թիւն կուտար, ու չէր ուզէր որ ընդունելու-
թեանց և հիւրամեծարութեան կանոններուն
հակառակ վարժուէր մը տեղի ունենայ իր
ապաշտանքին մէջ. առ այս իր սպասաւորնե-
րուն ու վերակացուներուն խիստ հրամաններ
ու հրահանգներ տուած էր, որով ամենե-
ւին պակասութիւն մը տեղի չէր ունենար:

Այսպէս, ճաշի ատեն, սպասաւորները
պարտաւոր էին իւրաքանչիւր հիւրին աստի-
ճանին ու դիրքին համեմատ սպասարկել ու
խօսիլ:

Օրինակի համար, երբ սեղանին վրայ
խորոված կովու միս բերուէր, զայն բաժ-
նելու պաշտօնը ունեցող սպասաւորը ձեռքը
պնակ մը բռնած նախ՝ թալէյրան իշխանին
կը մօտենար և,

— Տէ՛ր իշխան, կըսէր, շատ լաւ և
փուլած և խիստ համով կովու միսէն ձեր
բարձրութեան հրամցնելու թողտուութիւնը
ընելով, ծառանիդ կը պատուէք:

— Յետոյ, յատկապէս հրաւիրուած
դուքսի մը մօտենալով,

— Վսեմափայլ Դո՛ւքս, Ձեր պնակը
կտոր մը կովու միս դնելու պատիւը Ձեր ծա-
ռային կը շնորհէ՛ք, կըսէր:

Անկէ ետքը իշխանին մտերիմներէն Կոմ-
սի մը մօտենալով,

— Տէ՛ր Կոմս, քիչ մը կովու միս առ-
նելու կը հաճի՞ք:

Աստիճան մը ոգնուական համարուող
պառնի մը դիմելով.

— Տէ՛ր պարոն, կովու միս կը փա-
փաքի՞ք:

Յատկապէս հրաւիրուած պալլո անհա-
տի մըն ալ,

— Միւսի՛ւ, կովու միս կուզէ՞ք, կը
հարցնէր:

Իսկ իշխանին հետ տեսակցութեան գա-
լով պատահամբ ճաշի գտնուած մէկուն ալ
կը ձայնէր:

— Միւսի՛ւ, կովու միս:

Ամենէն ետքը բոլորովին ինքնակոչ եւ
անպէտ հիւրին կըսէր,

— Կո՛վ:

ՃԱՆՃԸ

Գարեջուրի զարարիկն մէջ:

Գերմանացի գիտնական մը, որ բաւա-
կան ուսումնասիրած է եղեր ազգերու
սովորութիւնները, հետեւեալ կերպով կը
նկարագրէ անոնց բռնած ընթացքը.
հանդէպ իրենց խմելիք գարեջուրի դա-
ւաթին մէջ ինկած ճանճին:

«Սպանիացին՝ գարեջուրին գինը
կը վճարէ ու կը մեկնի. Գաղիացին՝
մատերովը ճանճը կը հանէ ու զայն
ճղմելէ ետքը, կը նախատէ պանդոկա-
պետը ու ծառաները. Անգղիացին՝ գա-
րեջուրը գետին կը թափէ ու կը հը-
րամայէ որ ուրիշ դաւաթ մը բերեն
Գերմանացին՝ ճանճը կը հանէ ու գա-
րեջուրը կը խմէ. Ռուսը՝ ոչինչ բանի
մը համար ազհանգիստ չըլլար, ճանճն
ու գարեջուրը ի միասին կը կըլլէ. Իսկ
Չինացին՝ երկու մատովը ճանճը դուրս
հանելէն ետքը, շաքարի պէս աղւոր մը
կը ծծէ ու անոր վրայէն գարեջուրն ալ
կը խմէ:

Ապուրի պնակներուն մէջ

Անգղիացին երբ կը տեսնէ թէ ա-
պուրին մէջ ճանճ մը ինկեր է, պնակը
ապուրով մէկտեղ կը նետէ. Իտալացին՝
ճանճին ինկած տեղէն դգալով ապուրը
դուրս կը նետէ. Գերմանացին՝ բծա-
խնդիր չէ, ճանճը պնակին եղերքը կը
դնէ ու կը սկսի ապուրը ուտել. Իսկ

Խրուածք՝ ճանճն ու ապուրը ի միասին
կուսէ :

Բոժ. — Բարի ախորժակ :

ԹՈՒՑԻՑԻԿ ՆՇԱՆԱԾ ՄԸ

Չորեքշաբթի գիշերուան ժամը 2ն էր :
Քաղաքիս շատ մը գինեատուները այցելած
դէմքը խաշած խեղափառի նման կարմրած
գլխարկը մինչև յոնքերը քաշած , իյնալէն
ելլեկէն վրան գլուխը փոշոտած ու քսան եր-
կու տարին նոր թեւակոխած այս թուուցիկ
նշանածը * * * րդ թաղի տուներէն մէկուն
դուռը ձեռք կառնէ : Գուռը չի բացուիր .
նորէն կը զարնէ . ձայն չի կայ , վերջապէս
աքացի հարուածներ կիջեցնէ զրան , որուն
ձայնէն տնկցիք և դրացիք ընդոտ կարթըն-
նան և գիշերապահին օժանդակութեամբը
լաւ ընդունելութիւն մը կընեն այս շաշորդին ,
որ ուղղակի պահանջոց կառաջնորդուի :

Այն ատեն կանանց մէջ անցած հետեւ-
եալ խօսակցութիւնը յստակօրէն կը լըս-
ուին .

— Գայմէնի , թի՞ քէբապէլիք ինէ աֆ-
թի , Մառնես տունտու :

— Դո՛ւն ալ իմացար քա բօքօնա , էյ
արթըգ սօրմա , պի՞ղ հէփսիմիլ տապտուրի
չըգտըգ :

— Կալիպայա պու տապտուրի տէտի-
յինիդ . թանապոլու տէյիլ , տըշարլը օլմալը .
ուշագլար էմմէթէն գօրգտուլար :

— Հէ՛ , պիղտէ գօրգտուլ :

— Գալէ քի՛մ իմիշ պու հէրիֆ :

— Քա ճանըմ , իշթէ պու օղլանըն
պիր նշանածը վար ըմըշ , խենդ տիր տէյի
նշանը ետ են ըրեր . շիմտի պու ուշար պաշ-
կա պիր գըղա նշանլամըշլար տմա , խըրսըն-
տան քէօր սարխօշ օլույօր էսկի նշանլըսընըն
էվինի հէր ագշամ ալթ իւսթ էտէյօր :

— Մեղայ բուրուկ , կայծակներու կայ
պիլէքիմ , քառսուն օրս համբելու եղաւ . աս
ի՛նչ խախուլութիւն է :

— Հրամանքդ ալ իմացա՞ր , Իպրաքսէ
հանըմ :

— Հապա՞ ո՞վ չիմացաւ քի . ան ի՛նչ
բաթընտը էր , քիւմէսին թափուինները պիլէ
օտքի ելան . քա ամա սա նշանը ետ ընեկէն
ետըր ինչո՞ւ կուգայ տէ պալթա կըլլայ կոր :

— Քուրուկ , խենդ ըսածդ պոլյնուզ
կունենայ . սէօղտէ՝ «ինչ խտար քի իս մա-
րս պաշխասին նշանեց նէ՛ ես կէնէ քեզ
պիտի առնեմ» ըսելով , արատա պիր՝ կը
խմէ կը խմէ զափալլըներուն վրայ կուգայ .
«ասօր ո՞վ եկաւ . ո՞ւր գացիք . ի՛նչ կերաք .
ի՛նչ խմեցիք» տէյի կուի կը հանէ եղեր :

— Տունէ տեղէ հե՛ռու ըլլայ . ասանկ
շոշորդին հետ կարգուելիք աղջիկը աճապա
ի՛նչեր պիտի քաշէ :

— Կարգը կատարեն . հէմ քեզի բան
մը ըսե՛մ , խապահաթը բիւթիւն հօրը մօրը
բոլի է քի պուլունմազ հինտ խումաշի պէս
աղջիկին վախթով ադ դիւահարին նշանե-
ցին :

— Ան չէ տմա , սա ետքի նշանածին
թարաֆը առջի նշանը ետ ընենուն սէպէ-
պը չե՛ն իմացեր քի կը հանեն աղջիկ կու-
տան կոր :

— Իմացեր են տմա , կործին մէջ խըւ
լափուզ մը կայ եղեր քի , սանկ էլի պայրախ-
լը , աթլըլըլը աթտան էնտիրիր . երկու լա-
խըրտըյով մարդը կը կապէ եղեր :

— Լեզունին կապուի քի ասանկ հալ-
խուն զաւկներուն կլոխը կրակի կերեն տէ՛
իրենք դէմը կանցնին սէյիրճի կըլլան :

— Է՛հ , թող աղջիկան տէրերն ալ
ադ տուն կործանող խափուկներուն խօսքին
չի խաբուին տէ զաւկին չ՛երեն :

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

ԱՐԴԱՐ ՊԱՏԱՍԻԱՆ

Կիրակի առաւօտ մը , Բարիզի Մայր
եկեղեցիին դրանը առջև կարգ մը ծան-
ծաղամիտ պարոններ աղքատներու պէս

շարուած, եկեղեցիէն ելող գեղանի տիկինները ու օրիորդները աչքէ կ'անցունէին. անոնցմէ մէկը՝ գեղանի տիկնոջ մը մօտենալով ըսաւ .

— Տիկին, այսօր հաւատացի թէ եկեղեցին արքայութեան ճամբան է, վասն զի դուք հրեշտակի մը պէս դուրս կ'ելլէք անկէց :

— Պարոն, ես ալ այսօր համոզուեցայ թէ աշխարհք սատանայ երով լեցուն է, վասն զի եկեղեցիէն հազիւ դուրս ելած, ահա սատանաներէն կը պաշարուիմ :

Անմիտ հետաքրքրութեան հետեանքը .

Իմաստասէրին մէկը գիշեր ատեն ճրագին լուսովը մարդակազմութեան գիրք մը կարդացած ատեն, անդ մը հանդիպեցաւ, ուր սանկ գրուած էր .

«Երկայն կզակը խենդութեան նշան է» :

Ձայս ոտուգելու համար ճրագը առաւ . — Ըստ որում ինքն ալ երկայն կզակ մը ունէր — և հայելիին առջև վազեց, ու տհաճութեամբ անոր մէջը նայած ատենը ճրագը մօրուքին շատ մօտեցուցած ըլլալէն մօրուքը բռնկեցաւ և կէսէն աւելին այրեցաւ . իմաստասէրը բոլորովին հանդարտ և առանց խռովելու գնաց գրիչը առաւ ու գրքին լուսանցքին վրայ գրեց . «Ասոր փորձը եղած է» :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Լոնտոն

Խորհրդարանը բացուեցաւ . . . Մարիամ տուտուին նախաճառովը, որ կը յայտարարէր թէ իր նազարբէկեանութիւնը (իմա՝ կառավարութիւնը) առայժմ վերմակը գլուխը քաշած, լաւ յարաբերութեան մէջ է միւս կուսակցու-

թեանց հետ : Ծանոյց նաև թէ, ի պահանջել հարկին, իրենց կորուստալ հին փառքը ձեռք բերելու համար, Պուլկարիոյ մէջ հիմնուելիք պաշտպան թերթի մը տառերը պատրաստող ձուլարանին գումար մը պիտի յատկացուի . . . Ձէյթունեան կողոպուտէն :

Նախարարապետ և արտաքին գործոց պաշտօնեայ Մարքիզ Լառմէնի ժողովին ծանոյց թէ, հերետիկոս և հերձուածող Հնչակեանք՝ Արեւիկայի մէջ յանդգնած են ինպատ Զէյթունի հանգանակութեան ձեռնարկելու . բան մը, որ միմիայն նախագահ Միսիս Նազարբէկի անկապտելի իրաւունքն է, ըսաւ :

Նախագահը ի նշան գոհունակութեան Մ. Լառմէնիի զինքը պաշտպանելուն, անոր մօրուքը շոյեց և խոստացաւ իրիկունը երկու գաւաթ պիտա հրամցունել :

Պատերազմական նախարար Զօրավար Դրօշակ ըսաւ թէ, «Հէնց պէտք է ամեն ջանք ի գործ դնել այդ հանգանակուած գումարը Հնչակեաններու ձեռքէն առնելով Ամիրալին յանձնելու, որուն նաւատորմիլը խաչաճաքի պէտք ունի» :

Ամիրալ Շարփում — (Ծափահարելով) Կը ձայնակցիմ :

Ոստիկանապետ Տաւրոս . — Աճէլէ մի ըներ, մեր պաշտօնատունը քեզմէ աւելի խալաֆաթի պէտք ունի . հանրային անգործութեանը հսկելու պաշտօնը ունեցող տառական ժանտարմաներա զաւաններու ծակերէն դուրս ելած չունին, որովհետեւ 6 ամիս է փարս մը առած չենք . . . բաժանորդներէն :

Քողաքապետ Հայելի ալ առիթ գտած, իր «Իչէրիսի պէնի եագուր, տիշարըսը էլի» պիւտճէին համար դարման մը կը խնդրէր, բայց որո՞ւ կըսեմ, անանկ բան բռնող չիկայ :

Ելմտական նախարար Պ. Արմէնիա՝ խորհրդարանին յիշեցնելով թէ յառա-

ջիկայ ձմեռնային շրջանին համար պէտք եղած փայտն ու ածուխը ճարելու ժամանակը հասած է, Օժանդակ Կանձանակը առաջ քշեց:


Լորտ Մարտ մէյմէկ քիւրքիւ բալթօ առնելու ծրագիրը պաշտպանեց:

Մաքսային վերատեսուչ Պ. Խուզակ արտօնութիւն խնդրեց ճամբորդութիւն մը ընելու, որպէս զի հանդուցեալ Խուզակը վերակենդանացնելու համար նոր բաժանորդներ խուզարկէ: Այդ արտօնութիւնը տրուեցաւ իրեն:

Կրթական նախարար Կոբոթին Իրաւունք ալ իր յեանեալ բաժնեպահանջները գանձելու յուսով «Կարդացէք»-եան ազդու բողոքագիր մը տուաւ, որ յանձնուեցաւ կարգ մը քիչ-զգայուն բաժանորդներէ կազմուած քննիչ յանձնաժողովին, ըստ իւրեանց բարի ուղութեան... միևնոյն աշրջ ընելու համար:

Ժողովին վերջացած պահուն Դատական, նախարար Քիրիյէ Միտթիւն հարցուց թէ, «Ճանկիւլեանի խոստացած «Իմպիւլսները» երբ պիտի տեսնուին Պուլկարիոյ մէջ» առ այս՝ ներքին գործոց պաշտօնեայ Լորտ Մարտ լրջօրէն պատասխանեց. — Մեծ բարեկենդանին —:

Խորհրդարանը յառաջիկայ շաբաթ, Հոկտ. 3ին ի նիստ հրաւիրուած է նախագահական ճառին ի պատասխանի տրուելիք ուղերձին վրայ վիճաբանելու:



Տփղիս

Տօբթ. Նոր Դար, ինքնափորձ մասնագէտ մտային հիւանդութեան, առաջարկեց անիշխանականները հիւանդանոցներու մէջ փակել, մինչև որ առողջանան. իր այս խոհիւն առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ. յիմարապահներէն:

Մանչեսթըր

«Վաղուան ձայն»-ին մէջէն տեղ տեղ (ն)ին ձայնը չի պակսեցնելու համար (ց) գիրը առժամապէս հրաւիրուեցաւ՝ գլխիփայլ (ն)ի պաշտօն կատարելու:

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ



ՄՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ

ՊՈՒԼԻԱՐ ԿԵՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՅԲ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգու.

1898 Դեկտ. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16000 "

Մէկ ութերորդ տոմսակին գինն է, Ոսկի Լէվ Սթ.

Ա. ամսոյ համար	1	25
Բ. " "	1	75
Գ. " "	2	87 $\frac{1}{2}$
Դ. " "	3	62 $\frac{1}{2}$
Ե. " "	2	87 $\frac{1}{2}$
Զ. " "	2	27 $\frac{1}{2}$

14 40

Ասոնցմէ զատ կը գտնուին նաեւ քառորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնց արժէքները համեմատաբար կաւելնան:

Կենելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել սեղանաւոր Տ. Սարգիս Գաբրիէլեանի, Վառնա, Մուսալլա:

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԱՌՆԱ

Կընդունուին թոշակաւոր աղջիկներ և փոքր մանչեր, որոնք Օր. Լ. Ամիրխանեանցի վարչութեան ներքե կուսանին հայերէն, եւրոպական լեզուներ և գաշնակ:

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ



ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Վարժարանս իր երկրորդ տարին թե-
ւակոխած է: Իր ուղղութիւնը անցեալ
տարիէն ծանօթ լլալով պատուարժան
ծնողաց, աւելորդ կը համարի կրկնել
դայն:

Միայն թէ այս տարի փոխադ-
րուած է նոյն շէնքէն հինգ տուն վեր:

Մասնաւոր տեսակցութիւնք կը
կատարուին ամեն առաւօտ եւրոպա-
կան ժամը 9—12:

Տնօրէնութիւն

Դրդ Ուշատ Բ. Ղինիա Ն 40

Յ. Գ. Հրապարակին վրայ պտտած
զրոյցները անտեղի են:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուիին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տետրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեանս: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 և 15 սանդիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կտնիկ:

ԿՈՇԿԱԿԱՐ
ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍՍԱՆՃԵԱՆ

Մուսաղա, հաճի Հասան աղաի օթէլին
տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ
շինել տալ ուղղը պէտք է գիմէ Պ. Ստե-
փան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը
մէկ փորձով երևան կելայ:

Դիւերը դիւրամատչելի:

ՕՐԷՆՔ

Արհեստաւորաց բարեօրման

Արտատպեալ

Կառավարական պաշտօնական թեր-
թի XX տարւոյ թիւ 30, 98 փետր. 9ի
համարէն:

Դինն է 50 սանդիմ փոսթի՞ծախ-
քով. գիմել Սարգիս Կարապետեան.
մակաղին մօպիլի, Ռուստուկ: Մեծաքա-
նակ զնոդներուն հարիւրին 25 զեղչ:

ԳՈՒՇԱԿ
Ա. ՊԱԳՍԻԿամ Զուարճալի Բաղդացոյց
ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմել խմբագրութեան:



ԴԴԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու և պարերու.
նաև վիճակ ընկերական:
Դին մէկ ֆրանք:

Отговорникъ М. Скововъ
Печантица "Взаимность"—Варна.